

եկեղեցականաց, գորով 28. ամաց եւ չորից ամսոց, յայսմ ամի (1680) Օգոստոսի Ա, որոյ օրինակն է առ իս...» (14):

Իսկ Օրմանեանի յայտարարութիւնը՝ թէ այս հաւատոյ դաւանութիւնը «ծերունի հոգեվարքի գրեւուն կամ թելադրելուն կամ մտածելուն յարմար գրութիւն չէ, այլ ուրիշներէ պատրաստուած եւ նեղ վայրկենի մը մէջ իբր թէ ստորագրել տրուած գիր մըն է» (15), այդ պարզապէս անհիմն ենթադրութիւն մըն է: Շատ աւելի տագնապալից վիճակի մէջ Ոսկան Վարդապետ իր կտակը գրել տուած էր, եւ ամէն ժամանակ բաղմամբ եղած են այլալիսի դէպքեր, յորս կորովի ծերունիներ իրենց յետին կամքը յայտնած կամ թելադրած են իրենց մահուան անկողնին մէջ: Օրմանեան իսկ կ'ընդունի Ջողայեցի Հայրապետիս «տարօրինակ հոգւոյ գորութիւնը», երբ կը գրէ. «ուրսունամեան անցուցած եւ ծանրածանր արկածներու մէջ յոգնած ծերունի մը, երբոր առոյգ երիտասարդի պէս ձեռնարկներէ և ուղեւորութիւններէ չի փաշուիր, տարօրինակ հոգւոյ գորութեամբ նախացեալ կերպարան մը կը ներկայացնէ քստ ինքեան» (16): Այլուստ Պատմութիւնը չի կրնար ենթադրութեանց վրայ

(14) Ստեփ. Լեհացի, Ժամանակագրութիւն, յամն 1680:

(15) Ազգալ. Բ. 2616:

(16) Ազգալ. Բ. 2618: